ՀՀԽ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 դեկտեմբեր, 2024 թվականի № 92-Լ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՐԴԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 27-Ի № 56-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով, 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ և 34-րդ հոդվածներով, հիմք ընդունելով «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ նաև Ընկերություն) գործադիր տնօրենի լիազորությունները ժամանակավորապես իրականացնող պաշտոնատար անձի կողմից 2024 թվականի դեկտեմբերի 19-ին ներկայացված թիվ 30/24 գրությունը և հաշվի առնելով տեսալսողական ծրագրերի հաղորդացանցերի պարբերական բարելավման անհրաժեշտությունը՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Փոփոխել Հանրային հեռարձակողի խորհրդի 2024 թվականի օգոստոսի 27-ի № 56-Լ որոշման № 1 հավելվածով հաստատված՝ Ընկերության տեսալսողական ծրագրի՝ 2024 թվականի դեկտեմբերի 25-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ ժամանակահատվածում հեռարձակման համար նախատեսված հաղորդացանցը՝ այն շարադրելով նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման № 1 հավելվածի:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

25 դեկտեմբեր, 2024 թվականի

ք. Երևան